ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 20.05.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/02

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Մեծ Հիմք» Ա/Կ-ի 04.05.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից նյութերը, ՀՀ Արարատի մարզպետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) գրավոր դիրքորոշումը, պարզեց հետևյալը.

1. «Մեծ Հիմք» Ա/Կ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Մեծ Հիմք» Ա/Կ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 04.05.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

Սույն թվականի ապրիլի 28-ին կայացել է ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից հայտարարված ԱՄ-ԲԸՀԱՇՁԲ-17/01 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստը: Ընկերությունը սահմանված կարգով ներկայացրել է հայտը բոլոր 4 չափաբաժինների համար: Ընկերության ներկայացրած հայտը մերժվել է հետևյալ պատճառաբանությամբ. «ներկայացված հայտում էլեկտրոնային ստորագրությունները N 9 հավելվածի տուժանքի մասին համաձայնագրում ակտիվացված չեն»:

Ընկերությունը գտնում է, որ հայտի մերժման պատճառն անհիմն է, մատնանշելով, որ www.armeps.am էլեկտրոնային կայքն իր մեջ պարունակում է ներկայացված հայտերի տվյալների պահոց, որից արտածելով Ընկերության կողմից ներկայացրած փաստաթղթերը՝ կպարզվի, որ դրանք իրականում հաստատված են թվային էլեկտրոնային ստորագրությամբ:

Ընկերությունը ներկայացված բողոքով միաժամանակ գտնում է, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1)-ին կետով սահմանված պահանջը՝ «2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով»:

Ընկերությունը, որպես բողոքի իրավական հիմք, վկայակոչել է Օրեքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1)-ին կետով սահմանված պահանջը:

Ընկերությունը, գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է՝

• Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2)-րդ կետի համաձայն՝ ուժը կորցրած ճանաչել 2017թ. ապրիլի 28-ի ԱՄ-ԲԸՀԱՇՁԲ-17/01 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը:

Խորհրդում 10.05.2017թ. ժամը 15:00-ին N ԳԲԽ-ԷՍ-2017/02 բողոքի քննության նիստին ներկայացել էր Ընկերության տնօրեն Աշոտ Զաքարյանը: Վերջինս բողոքը պնդեց ամբողջությամբ:

2. <u>ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

ՀՀ Արարատի մարզպետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 10.05.2017թ. Խորհրդին է ներկայացրել ԱՄ-ԲԸՀԱՇՁԲ-17/01 ծածկագրով արտակարգ կամ անկանխատեսելի իրավիճակի առաջացման հիմքով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգին (այսուհետ նաև՝ ընթացակարգ) վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Պատվիրատուն 12.05.2017թ. Խորհրդին ներկայացրել է նաև դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Արարատի մարզպետարանի կարիքների համար անցկացված «ԱՄ-ԲԸՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով մրցույթին «Մեծ Հիմք» Ա/Կ-ի կողմից ներկայացված թիվ 9-ը հավելվածի վճարման պահանջագրի 18 ա պարտադիր լրացվող դաշտը լրացված չէ:»:

Խորհրդի 10.05.2017թ. նիստին մասնակցում էր Պատվիրատուի ներկայացուցիչ՝ ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական

զարգացման վարչության պետ՝ Գուրգեն Եղիազարյանը: Գուրգեն Եղիազարյանը նիստի ընթացքում Խորհրդին հայտնեց, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որոշումը պայմանավորել է նրանով, որ N 9 հավելվածում վճարման պահանջագրում ստորագրությունը ակտիվացված չլինելուց բացի ֆիքսված չի նաև ստորագրության տողը (18ա պարտադիր լրացվող դաշտը լրացված չէ):

3. ԳԲԽ-ԷՍ-2017/02 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԷՍ-2017/02 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ԱՄ-ԲԸՀԱՇՁԲ-17/01 ծածկագրով արտակարգ կամ անկանխատեսելի իրավիճակի առաջացման հիմքով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ հանձնաժողով) կողմից 2017 թվականի ապրիլի 18-ի թիվ 2 որոշմամբ հաստատված և հրապարակված N ԱՄ-ԲԸՀԱՇՁԲ-17/01 ծածկագրով արտակարգ կամ անկանխատեսելի իրավիճակի առաջացման հիմքով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ հրավեր):
2. Հրավերի N 9 հավելված հանդիսացող տուժանքի մասին համաձայնագիրը և կից ներկայացվող վճարման պահանջագիրն, ինչպես նաև վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգը:
3. Հանձնաժողովի 2017թ. ապրիլի 28-ի թիվ 3 արձանագրությունը:
4. Պատվիրատուի դիրքորոշումը:
5. Խորհրդի նիստերի ընթացքում Պատվիրատուի և Ընկերության ներկայացուցիչների կողմից արտահայտած կարծիքները և դիրքորոշումները:
6. «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի կողմից 12.05.2017թ. ներկայացված թիվ 085/05.17 գրությունը:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդը ուսումնասիրել է «Մեծ Հիմք» Ա/Կ-ի 04.05.2017թ. ներկայացրած բողոքը, Պատվիրատուի ներկայացրած փաստաթղթերը, N ԱՄ-ԲԸՀԱՇՁԲ-17/01 ծածկագրով

արտակարգ կամ անկանխատեսելի իրավիճակի առաջացման հիմքով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի հրավերը, Պատվիրատուի ներկայացուցչի ներկայացրած դիրքորոշումը և կարծիքը, Պատվիրատուի կողմից 12.05.2017թ. Խորհրդին ներկայացրած դիրքորոշումը, «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի կողմից 12.05.2017թ. Խորհրդին ներկայացրած գրությունը.

ՀՀ Արարատի մարզպետարանը ք.Վեդի, Ոսկետափ, Ավշար համայնքների հասցեներում «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» աշխատանքների ձեռքբերման նպատակով 18.04.2017թ. հայտարարել է N ԱՄ-ԲԸՀԱՇՁԲ-17/01 ծածկագրով արտակարգ կամ անկանխատեսելի իրավիճակի առաջացման հիմքով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգ:

«Մեծ Հիմք» Ա/Կ-ն կազմակերպված ընթացակարգի բոլոր չափաբաժիններին մասնակցելու նպատակով ներկայացրել հայտ:

Ընկերության կողմից ներկայացրած հայտը հանձնաժողովի կողմից 2017թ. ապրիլի 28-ի թիվ 3 արձանագրությամբ մերժվել է՝ ներկայացված հայտում ներառված N 9 հավելվածի՝ տուժանքի մասին համաձայնագրում, էլեկտրոնային ստորագրություններն ակտիվացված չլինելու հիմնավորմամբ:

Բողոքի քննության նպատակով 10.05.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ, ինչպես նաև 12.05.2017թ. Խորհրդին ներկայացված թիվ 2/3/1-2/3097-17 գրությամբ՝ Պատվիրատուն հայտնել է, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որոշումը պայմանավորել է նրանով, որ N 9 հավելվածին կից վճարման պահանջագրում ստորագրությունն ակտիվացված չլինելուց բացի, ֆիքսված չի նաև ստորագրության տողը (18ա պարտադիր լրացվող դաշտը լրացված չէ):

ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 35-րդ կետի 9)-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկությունները էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով: Ընդ որում, տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը զետեղված է «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում:

Խորհուրդն, ստացված բողոքով համապատասխան որոշում կայացնելու նպատակով, 10.05.2017թ. գրությամբ դիմել է «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ին (այսուհետև՝ ԷԿԵՆԳ ընկերություն), խնդրելով տրամադրել «Մեծ Հիմք» Ա/Կ-ի նախագահ Ա. Զաքարյանի՝ N 9 հավելված հանդիսացող տուժանքի մասին համաձայնագրում, էլեկտրոնային ստորագրությունն ակտիվ լինելու կամ չլինելու մասին տեղեկատվություն:

ԷԿԵՆԳ ընկերությունն ի պատասխան Խորհրդի 10.05.2017թ. գրության և կից ներկայացված «PDF» ձևաչափով փաստաթղթերի, տեղեկացրել է, որ ընկերության կողմից կատարվել է թվային ստորագրության ստուգում, որի արդյունքում հաստատվել է հետևյալը՝

«Ընկերության կողմից .PDF ձևաչափով ներկայացված՝ Վճարման Պահանջագիր, Հայտարարություն և Հավելված 9 փաստաթղթերը, կնքված են Աշոտ Զաքարյանի, ՀԾՀ՝ 2402600241, էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ 2017թ. ապրիլի 28-ին և հանդիսանում են էլեկտրոնային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր:

Փաստաթղթերը ներառում են էլեկտրոնային ստորագրության անբաժան մանրամասները՝ արտահայտված փաստաթղթերի կցված էլեկտրոնային ստորագրության դարանում, այն է՝

- Էլ. ստորագրության ամսաթիվ/ժամ,
- Էլ. հավաստագրի եզակի գրանցման համար,
- Էլ. ստորագրության վավերության ժամանակահատված,
- Էլ. հավաստագրերի չեղարկման ստուգում,
- Այլ մանրամասներ:»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի ՝

- 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 2-րդ մասի 1)-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 1)-ին կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Մեծ Հիմք» Ա/Կ-ի 04.05.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Դադարեցնել N ԱՄ-ԲԸՀԱՇՁԲ-17/01 ծածկագրով արտակարգ կամ անկանխատեսելի իրավիճակի առաջացման հիմքով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի հանձնաժողովի 2017թ. ապրիլի 28-ի թիվ 3 արձանագրությամբ «Մեծ Հիմք» Ա/Կ-ին մերժելու որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ